23.03.23 - 23.03.23
14:30
Անցանց
Գրանցումը փակ է
☐

Պահպանել Google օրացույցում
ԵՊՀ աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետ, 419 լսարան

Ս.թ. մարտի 23-ին՝ ժամը 14:30-ին, ԵՊՀ աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի 419 լսարանում շրջանավարտների և կարիերայի կենտրոնի նախաձեռնությամբ տեղի կունենա «Տուրիզմի զարգացման հեռանկարները ՀՀ-ում և թափուր աշխատատեղեր» խորագրով հանդիպում «Արշավներ ակումբ» տուրիստական ընկերության հիմնադիր տնօրեն Ռուբեն Բաղդիշյանի հետ։

Հանդիպմանը կներկայացվի «Արշավներ ակումբ»-ի անցած ուղին, կքննարկվի տուրիզմի արդի վիճակը, զարգացման միտումները և հնարավորությունները, աշխատաշուկայում առկա խնդիրները, ինչպես նաև գործատուների ներկայացրած հիմնական պահանջները թափուր աշխատատեղերի համալրման համար։

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
(+37460) 710000
info@ysu.am